ՀԱՄԱՑԱՆՑԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՇՀԾՁԲ-11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-14

ք. Երևան «23» դեկտեմբերի 2013թ.

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը, ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Հ. Գևորգյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Կոմպլաբ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Ն. Մանուկյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել համացանցի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գնման ժամանակացույցի և N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Սույն պայմանագրի պահանջներին համաձայն նախատեսված Ծառայությունները կմատուցվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա/ Չընդունել Ծառայությանը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը;

բ/ Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե՝

ա/ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝ .

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սանկցման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները;

բ/ Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման Ֆարձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1920000 /մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է ՀՀ օրենսդրության սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

4.3 Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորությունները ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում կկնքվի համաձայնագիր:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սուն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այն, որոնք անհնարին են դարձնում սույն կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ	«Կոմպլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի 12	ք. Երևան, Քանաքեռ 17 փ., տուն 9
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության	«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011404119	Հ/Հ 11800062669700
ՀՎՀՀ 00454227	ՀՎՀՀ 00846055
_____ Հ. Գևորգյան	_____ Ն. Մանուկյան
/աշխատակազմի ղեկավար/	/տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
23 դեկտեմբերի 2013թ.կնքված
N ՇՀՄՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ -14
գնման պայմանագրի

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության

<<Ինտերնետ>> ցանցի մուտքի ապահովման ծառայությունների

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 1

N	Անվանումը	Նկարագրումներ
1	Կապի տեսակը	ա) օպտիկամանրաթելային մալուխ Download-ի և Upload-ի համար ռեզերվային գծի ապահովում բ) ռադիոմոդեմային կապուղի (ռեզերվային)
2	Երաշխավորված ամսեկան ծավալը	20 Մբ/վրկ (հաշվի չի առնվում Հայաստանի էջերը)
3	Կապի երաշխավորված արագությունը	Նվազագույնը 10 մբ/վրկ
4.	Սպասարկվող սարքավորումների ձեռքբերման, տեղադրման և կարգավորման նախապայմանները	օպտիկամանրաթելայի մալուխ-գծերի, սերվերների հեռահաղորդակցական սարքավորումների սպասարկում
5	Այլ պահանջներ	-12 IP հասցեների տրամադրում
		- ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասնաշենքի (ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/3) լոկալ ցանցի 140 համակարգիչների ինտերնետի հասանելիության ապահովում, ինտերնետի անցուղու (Gatewey) միջոցով
		-ներկայումս առկա ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (www.ssfs.am) կայքի տեղակայում (հոսթինգ), անխափան աշխատանքի ապահովում
		-ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 140 աշխատակիցների համար էլեկտրոնային փոստի SMTP, POP 3 ծառայության ապահովում
		-ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության լոկալ ցանցի ինտերնետի անցուղու (Gatewey) կառավարման ապահովում (փոստային արկղերի ստեղծում, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակիցների ինտերնետային ռեսուրսների օգտագործման ծավալի կառավարման հնարավորություն, ռեսուրսների օգտագործման մոնիտորինգի և սահմանափակման հնարավորություն յուրաքանչյուր օգտագործողի համար), Firewall ծրագրի տրամադրում: FTP –սերվերի աշխատանքի ապահովումը և տեղեկատվություն ավելացնելու ու հեռացնելու հնարավորություն:

		-ՀՀ ԳՆ սենդամթերքի անվտանգության պետական ծառայության տարածքում տեղակայված ինտերնետ կապի մատակարարողի սերվերների վրա հակավիրուսային և այլ ծրագրային փաթեթների տեղակայում և սպասարկում:
		-ՀՀ ԳՆ սենդամթերքի անվտանգության պետական ծառայության տեղեկատվական անվտանգության (ՏԱ) ապահովում՝ Ցանցային ակտիվության մոնիտորինգի ապահովում և գնման հնարավորություն (NetFlow, SNMP և այլն): Ցանցային ակտիվության մատյանավորում (logging): Սերվերների և ցանցային սարքավորումների տվյալների կրկնօրինակների արխիվային պահպանում և վերականգնում՝ համապատասխան կարիքների
		Կոնֆերանսների համակարգի ապահովում և սպասարկում, որը իր մեջ ներառում է հետևյալ հնարավորությունները և գործիքները՝ • մոնիթորի կամ առանձին ծրագրերի համատեղ օգտագործում (screen sharing) • շհորհանդեսների ցուցադրում • կայքերի միաժամանակյա դիտարկում (cobrowsing) • էկրանի ամփոփում • մասնակիցների մոնիտորինգ • տեքստային շփում /text chat/ • ինտեգրված ձայնային տվյալների փոխանցում • տեսակոնֆերանս կապ • վարողին փոխելու հնարավորություն • հանդիպումների և հրավերների պլանավորում /scheduling/ • վեբկոնֆերանսի ձայնագրում EoIP ծառայության ապահովում և սպասարկում հետևյալ հնարավորությամբ՝ • տրանսպորտային ցանցի երթուղման ապահովում • ցանցային ակտիվության մոնիտորինգի ապահովում (NetFlow,SNMP) • մատյանավորման ապահովում (logging) • hardware ռեզերվային կրկնօրինակների ապահովում • պրոֆիլակտիկ միջոցառումների կազմակերպում և իրականացում ՀՀ ԳՆ սենդամթերքի անվտանգության պետական ծառայությանը անհրաժեշտ է օգտվել համակարգչային կլաստերից, որը հնարավորություն կտա լուծելու ՀՀ ԱԿԾ-ի առկա խնդիրները, որոնք պահանջում են հաշվողական մեծ ռեսուրսներ • ՀՀ ԳՆ սենդամթերքի անվտանգության պետական ծառայության տաս մարզային գործակալություններին ինտերնետային կապով ապահովում
6	Լիցենզիա	<<Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) >> լիցենզիայի առկայություն

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Էրեբունի 12
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչության
Հ/Հ 900011404119
ՀՎՀՀ 00454227

Հ. Գևորգյան
/աշխատակազմի ղեկավար/
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կոմպլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 17 փ., տուն 9
«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800062669700
ՀՎՀՀ 00846055

...Մանուկյան
(տնօրեն)
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
23 դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՇՀՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ -14
գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

N	Գնման ենթակա ծառայության անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորվել ՀՀ 2014 թ.-ի պետական բյուջեից			
				2014 թ.		**ընդամենը**	
				քանակը	գումարը	քանակը	գումարը
1	2	3	4	5	6	7	8
1	Համացանց	դրամ		1	1920000	1	1920000
Ընդամենը							

Պատվիրատու՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Էրեբունի 12
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011404119
ՀՎՀՀ 00454227

Աշխ. ղեկավար _____ Հ. Գևորգյան
ստորագրություն

Կ.Տ

Կատարող՝
«Կոմպլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 17 փ., տուն 9

«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800062669700
ՀՎՀՀ 00846055

Տնօրեն _____ Ն. Մանուկյան
ստորագրություն

Կ.Տ

«ԿՈՄՊԼԱԲ»
«КОМПЛАБ»
«COMPLAB»
00846055

Հավելված N 3
23 դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՇՀԾՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ԱԱՊԾ-14
գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	Գնման ենթակա ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորվել ՀՀ 2014 թ.-ի պետական բյուջեից	
		յուրաքանչյուր ամիս ծառայության հանձնման-ընդունման ավարտից հետո 10 օրացույցային օրվա ընթացքում	
1	2	3	4
1	Համացանց	100%	100%

Պատվիրատու՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան,
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011404119
ՀԿՀՀ 00454227

Աշխ. ղեկավար _____ Հ. Գևորգյան
ստորագրություն

Կ.Տ.

Կատարող՝
«Կոմպլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 17 փ., տուն 9

«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800062669700
00846055

Տնօրեն _____ Ն. Մանուկյան
ստորագրություն

Կատարող՝

«Կոմպլեքս» ՍՊԸ
ք. Երևան, Բանաքեռ 17 փ., տուն 9
«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800062669700
ՀՎՀՀ 00846055

Պատվիրատու՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք.Երևան, Կոմիտաս 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011404119
ՀՎՀՀ 00454227

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 2014 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____և
Կատարողը՝ ի դեմս _____,

հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայության մատուցումը համապատասխանում է պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____2014 թ-ից _____2014 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայության մատուցումը

Վերոհիշյալ ծառայության մատուցման կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Մատակարարման կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն

Կ. Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն

Կ. Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N02 ՇՀԾՁԲ 11/1-6

23.12.2013թ. կնքված N ՇՀԾՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-14 գնման

ք. Երևան « » հունվարի 2014թ.

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Գևորգյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Կոմպլաբ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ն. Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշումը և N ՇՀԾՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-14 գնման պայմանագիրի 7.3 կետի կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 N ՇՀԾՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-14 պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:

1.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ծառայության դիմաց վճարում է պայմանագրով, նախատեսված կարգով, սույն համաձայնագրի N 3 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 23.12.2013թ. կնքված N ՇՀԾՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-14 Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	«Կոմպլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս49/2	ք.Երևան, Քանաքեռ 17փ. 9տ.
ՀՀ Ֆինանսների Նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011404119	Հ/Հ 11800062669700
ՀՎՀՀ 00454227	ՀՎՀՀ 00846055
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն
_____ Հ. Գևորգյան	_____ Ն. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 3
հունվարի 2014թ. կնքված
N ՇՀՇՁԲ 11/1-6 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-14
գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	Գնման ենթակա ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակը	Նախատեսվում է ֆինանսավորվել ՀՀ 2014 թ.-ի պետական բյուջեից				
				յուրաքանչյուր ամիս ծառայության հանձնման-ընդունման ավարտից հետո 10 օրացույցային օրվա ընթացքում				
				1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	Ընդամենը
1	2	3		5				6
1	Համացանց	դրամ	1	480000	480000	480000	480000	1920000

Պատվիրատու՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 900011404119
ՀԿՀՀ 00454227

Աշխ. ղեկավար Հ. Գևորգյան
ստորագրություն
Կ.Տ

Կատարող՝
«Կոմպլաբ» ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 17 փ., տուն 9

«Անելիք Բանկ» ՓԲԸ
ՀՎՀ 11800062669700
00846055

Տնօրեն Ն. Մանուկյան
ստորագրություն
Կ.Տ